ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԱՐԴԻՒՆՔՈՒՄ՝ ՎՏԱՆԳԱՒՈՐ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐ

ՀՀ Գերագոյն Խորհրդի երկրորդ նստաշրջանն իր աշխատանքը վերակսեց վարչական իրաւախախտումների վերաբերեալ օրէնքի նախագծի քննարկմամբ։ Այն դէպքում, երբ հանրապետութիւնը ապրում է տագնապալից օրեր. քաղաքական, տնտեսական ծանր կացութիւն, ընկերային, իրաւական անապահովուածութիւն, կենտրոնական իշխանութիւնների բացայայտ ճնշումներ, արցախահայութեան բռնի տեղահանումներ, նոր յարձակումներ սահմանամերձ գիւղերի վրայ եւ այլն։

Ստեղծուած իրավիճակը յոյժ է անարբերելի հետեւանքներով եւ կարող է ճակատագրական դառնալ ոչ միայն անկախութեան գործընթացի, այլեւ մեր ժողովրդի համար ընդհանրապէս, որի գլխին կախուած վտանգը հեռացնելու փոխարէն, ընդհակառակը, փորձեր են արւում շնկատելու տալ այն, վարագուրել արտաքին քաղաքականութեան պատրանքներով։ Մրն է այդ քաղաքականութիւնը եւ ի՞նչ արդիւնք է տուել այն ցայսօր։ Եթէ Ֆրանսիայի պրեզիդենտի հետ հանդիպման փաստն ինքնին արդիւնք համարւի, ապա այդպիսի քաղաքականութեամբ հեռուն չես գնա, մանաւանդ, երբ Մոսկուան չի թաքցնում, որ Հայաստանի հարցերը մէկ այլ տեղ, բացի Մոսկուայից, վճռուել չեն կարող։

Իսկ հանրապետութեան պրեզիդենտի ընտրութիւնը կամ նախագահին պրեզիդենտական լիազօրութիւններով օժտելը ոչինչ չի կարող փոխել եւ, ըստ էութեան, այլ նպատակ չի հետապնդում, քան սոսկ ժամանակի շահում՝ վերջնականապէս չը հիասթափեցնելու դեռեւս յոյսերով օրօրուող մարդկանց, նոր խոստումներով զբաղեցնելու քաղաքական միտքը։ Մինչդեռ եղած բոլոր ուժերն ու կարողութիւնները մեր ժողովրդին սպառնացող վտանգը վերացնելուն, հանրապետութեան ներքին հարցերը լուծելուն, կենտրոնի հետ յարաբերութիւնները կարգաւորելուն նպատակուղղելու փոխարէն, փատօրէն, ծառայեցւում է հանրապետութիւնում իշխանութեան համակենտրոնացմանը։